ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՋԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԻՆՁԻՆՅԱՆ

Գերաշնորհ Տ. Զավեն եպիսկոպոս Ձինձինյանը ծնվել է 1929 թվականի հոկտեմբերի 29-ին, Հալեպում, կիլիկեցի ծնողներից (Մարաշ)։ Ավազանի անունն է Գևորգ։ Սովորել է Հալեպի Կիլիկյան վարժարանում։ Այնուհետև ընտանյոք Պաղեստին հաստատվելով, սովորում է Երուսաղեմի հայոց Սրբոց Թարգմանչաց վարժարանում և դասընթացը ավարտելով 1945 թվականին, ընդունվել ժառանգավորաց վարժարանը։

1949 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով իր ուսումը, սարկավագ է ձեռնադրվել։

1951 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանից Երուսաղեմում։

Այնուհետև երիտասարդ և խոստումնալից հոգևորականի առաջ բացվում է վանական-վարչական, մանկավարժական, հովվական բեղուն գործունեության ասպարեզ, որպես ուսուցիչ Սրբոց Թարգմանչաց և ժառանգավորաց վարժարաններում, որպես տեսուչ տպարանի, անդամ «Սիոն» ամսագրի խմբագրական մարմնի, քարտուղար Ս. Տեղյաց և դիվանապետ։

1958 թվականից ի վեր ձեռնհասորեն վարում է Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդի պաշտոնը։

1965 թվականի նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ս. Էջմիածնում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից։

Գերաշնորհ Տ. Զավեն սրբազանը հավատավոր, պատրաստված և նվիրյալ հոգևորական է։

Սրբազանը երիտասարդ է, գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման և հասունության շրջանում։

Տ. Զավեն սրբազանը իր նորանոր արդյունքներով և բարի ծառայություններով կարդարացնի Վեհափառ Հայրապետի ակնկալությունները, հօգուտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ հավատացյալ ժողովրդի։